ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Վայքի համայնքապետարանի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՀ-ԷԱՃԾՁԲ-24/1»
ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Վայք 03 ապրիլի 2024թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Անուշ Ղազարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

Գրետա Վարդանյան՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Մանե Ստեփանյան՝ համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արսեն Գևորգյան – Ֆինանսատնտեսական բաժնի գլխ. մասնագետ

Նիստին բացակայում էր՝ Մերի Ղամբարյանը՝ համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

1. **Տեղեկություն՝** «ՎՀ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:

- Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps. am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակելու օրվանից հաշված 11-րդ օրվա (02.04.2024թ)՝ ժամը՝ 11:00 -ն,
- Հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 03. 04. 2024թ՝ ժամը 11:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնման գնի վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման գինը,

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	Վայքի համայնքապետարան՝ Ներքին աուդիտի ծառայության ձեռքբերում	1500000

3. **Էլեկտրոնային ձևով ՝ Համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները**

Մասնակցի անվանումը	Մասնակցի գործունեության հասցեն
«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ	ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես կենտրոն, Արգիշտի փ.7, 2-րդ հարկ: procurement@crowe.am, 099-54-33-88,060-53-23-23
«Փըրֆեքտ Աուդիտ» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի փ.7, perfectaudit@bk.ru, 093-878-382,
«ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	Արարատի մարզ, ք. Վեդի, Արարատյան փ.շ.55, saam-audit-group@mail.ru.,

4. **Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. **Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. **«ՎՀ-ԷԱՃԾՁԲ-24/1»** ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները

Չ/հ	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ	2000000	20%	2400000	500000	20%	600000	
1	«Փըրֆեքտ Աուդիտ» ՍՊԸ	1249200	20%	1499040	825000	20%	990000	
1	«ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	1230000	20%	1476000	487700	20%	585240	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել ՝ աճուրդն ամփոփվել է ապրիլի 3-ին ժամը՝ 11:32-ին և «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ –ն համակարգի կողմից համարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում ՝ կողմ ՝ 3 , դեմ՝ 0

7. **Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ՍԱԱՄ - ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

- Ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան
- Ներկայացված հայտում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1,3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
- Չի ներկայացվել հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված 5-րդ բաժնի բ կետի, 7-րդ բաժնի, 8-րդ բաժնի 2-րդ կետի պահանջները)
-

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. -ի մայիսի 4-ի N 526 –Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի, ինչպես նաև «ՎՀ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I -ի 8. 11 –րդ կետի պահանջներով՝ **«ՍԱԱՄ - ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ** հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև ս/թ **ապրիլի 8 –ը ներառյալ** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Անուշ Ղազարյան՝ _____

անդամներ՝

Գրետա Վարդանյան՝ _____

Մանե Ստեփանյան՝ _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Արսեն Գևորգյան _____